վկայում է «ընտրեցաք զ իշխան, որ զան առ ձեր բարի թագաւորութիւնն» ասացուածքի ստուգութեանը:

Երկրորդ՝ Պետրոս Մեծին գրուած խնդրի եթէ ոչ շարադրողը, բայց յամենայն դէպս հեղինակը Իսրայէլ Օրին է. իսկ նա՝ Օրին՝ նոյնպէս մասնակցել է Զուղայեցու պատգամաւորութեան մէջ եւ ուրեմն շատ լաւ ծանօթ է ամբողջ անցուդարձին: Եւ եթէ նա էլ վկայում է, որ «ընտրեցաք զ իշխան, որ զան առ ձեր բարի թագաւորութիւնն» — հետեւաբար, այլեւս ոչ մի կասկած չի մնում:

Միւս կողմից՝ ռուսաց թագաւորի մօտ յատուկ եւ արագ պատգամաւորութիւն ուղարկելը խիստ կարեւոր էր՝ Հայաստանի ազատագրութեան ծրագրի տեսակէտից եւս: Ինչպէս գիտենք, ըստ այդ ծրագրի՝ Հայաստանի ազատագրումը պիտի կատարուէր այսպէս — Դրսից գալիս է մի փոքրիկ զինական օգնութիւն, որին միանալով հայ զինուած ոյժերը, քշում են թշնամիներին եւ ազատագրում երկիրը: Իսկ այդ «դուրս» ասելով, սկզբնական շրջանում, այն է՝ մինչեւ Օրի, հասկացւում էր Արեւմտեան Եւրոպան, Օրիից սկսած եւ նրանից յետոյ — Ռուսաստանը:

Արդ, եթէ Զուղայեցու օրով Հայաստանի ազատագրութեան անհրաժեշտ նախապայմանն էր դրսի օգնութիւնը, ապա նշանակում է, որ ամենից առաջ հարկաւոր էր ապահովել ռուսների համաձայնութիւնը, որովհետեւ միմիայն Ռուսաստանով կարող էր եւրոպական զօրքը Հայաստան անցնել1):

Երրորդ կողմից՝ պատգամաւորութեան բաժանումը երկսի նաեւ նպատակայարմար էր գործի արագութեան եւ յաջողութեան տեսակէտից: Եթէ մէկ պատգամաւորութիւն լինէր — ծանրամարմին լինելու հետ միասին նաեւ շարժուելու բազմաթիւ այլ դժուարութիւններ ունենալով — չափազանց երկար ժամանակ պիտի պահանջէր նրանից Եւրոպայի մի ծայրից՝ Ռուսաստանից մինչեւ միւս ծայրը՝ Իտալիա, Գերմանիա պատելու համար: Իսկ երկսի բաժանուելով, աշխատանքը եւ դրա հետ միասին նաեւ պահանջուած ժամանակը կրճատւում էր կէս առ կէս, որը չափազանց կարեւոր մի հանգամանք էր եւ չէր կարող ուշադրութեան չառնուել Էջմիածնի ժողովի կողմից:

Պատգամաւորութիւնը Էջմիածնից դուրս գալով, մեծ դժուարութիւններից յետոյ, յաջորդ տարուան (1679 թ.) դեկտեմբերին հասնում է Պոլիս: Թէ ի՛նչ յոյսերով էր գնում նա — դժուար է ասել. բայց որ անշուշտ, որոշ լաւատեսութիւն տանում էր իր հետ — դա շատ հաւանական է: Թէեւ այս մասին որեւէ փաստական տուիք չունինք, սակայն նման եզրակացութիւն մենք կարող ենք հանել, ելնելով այն ընդհանուր լաւատեսութիւնից, որ տիրում էր մեզանում Հայաստանի ազատագրութեան նկատմամբ **եւ՛ Զուղայեցու օրով, եւ՛ նրանից** յետոյ:

Այսպէս, օրինակ, Էջմիածնի ժողովից ընդամէնը 23 տարի յետոյ՝ Ղարաբաղի մելիքներն այն համոզումն ունէին, որ Հայաստանի ազատագրումը մի շատ հեշտ բան է, ընդամէնը մի ամսուան գործ: Այդ գործի համար հարկաւոր ամէն ինչը իրենք ունեն — դրամ, զէնք, մարդ եւն. պակասում է միայն մէկ գլուխ, որը դար եւ գործը իր ձեռքը վերցնէր. իսկ դրանից էլ հեշտ բա՞ն. Եւրոպայի ո՞ր մէկ վեհապետը չէր ցանկանայ այդքան դիւրին եւ միանգամայն ժամանակ պատուաւոր նախաձեռնութիւնը յանձն առնել — եթէ ոչ յանուն քրիստոնէական մարդասիրութեան, յանուն նահատակուող հայ ժողովրդի, բայց գոնէ Հայաստանի թագը իր կամ իր բարեկամներից մէկն ու մէկի գլխին դնելու համար: Անգամ Իսրայէլ Օրիի նման քաղաքական գործիչ զինուորականը այն կարծիքի էր, որ Հայաստանի ազատագրումը 15 օրուան գործ է, եթէ դրսից լինի մէկ փոքրիկ օգնութիւն, այն էլ «ոչ թէ 15 կամ 20 հազար, այլ միայն 5 հազար» (Եղեան, «Պետրոս Մեծի յարաբերութիւնները», փաստ., թիւ 5, 37, 43):

Պատգամաւորութիւնը Պոլսում չուտով համոզւում է, թէ ինչ անյաղթելի խոչընդոտ-

1) Զարմանալի է, որ Իսրայէլ Օրին այդ մասին բոլորովին մէկ տարբեր ծրագիր ունէր, միանգամայն ցնորական: Ըստ այնմ՝ եւրոպական զօրքը փորթուգալական նաւերով պիտի իջնէր Բենդէր-Աբաս, Պարսից ծոցի վրայ եւ այդտեղից սկսէր իր շարժումները դէպի Հայաստան (Եղեան, փաստ., թիւ 37): Երեւակայո՞ւմ էք, թէ ի՛նչ անկարելիութիւն է դա: